ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2011, 64, № 2, 73-74

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ՖԱՐԱՄԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԻՄՈՆԻ
(1926 – 2011)

2011թ. մայիսի 16-ին, 85 տարեկան հասակում կյանքից հեռացավ ճանաչված գիտնական, ՀՍՍՀ Պետական մրցանակի դափնեկիր, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություններ երկրի մասին» տեղեկագիր գիտական ամսագրի պատասխանատու խմբագրի տեղակալ, Երկրաբանական գիտությունների ինստիտուտի առաջատար գիտաշխատող Անդրանիկ Սիմոնի Ֆարամազյանը:

Ա.Ֆարամազյանը ծնվել է Ուզբեկական ՍՍՀ Անդիժան քաղաքում, 1926թ. դեկտեմբերի 18-ին, ծառայողի ընտանիքում: 1933թ. Ֆարամազյանների ընտանիքը տեղափոխվում է Երևան: 1944թ. Նա ավարտում է Գորկու անվան միջնակարգ դպրոցը, 1948-1950թթ. սովորում Երևանի Լենա-մետալուրգիական տեխնիկումում: 1955թ. գերազանցությամբ ավարտում է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային ֆակուլտետը՝ լեռնային ճարտարագետ-երկրաբանի մասնագիտությամբ:

1956թ. Ա.Ֆարամազյանը ընդունվում է ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ասպիրանտուրա երկրաքիմիա մասնագիտությամբ և 1961թ. ՍՍՀՄ ԳԱ Երկրաքիմիայի, միներալոգիայի պետրոգրաֆիայի և մետաղական օգտակար հանածոների գիտահետազոտողական ինստիտուտում (ԻԳԵՄ, Մոսկվա) պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայրի հազվագյուտ և ցրված տարրերի միներալոգիան և երկրաքիմիան» թեմայով, ստանալով երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1956թ.-ից մինչև կյանքի վերջը, շուրջ 55 տարի անընդմեջ, Ա.Ֆարամազյանը, աշխատել է Երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես լաբորանտ, կրտսեր գիտաշխատող, 1963թ.-ից՝ որպես ավագ գիտաշխատող, իսկ 1996-98թթ. գլխավորել է երկրաքիմիայի լաբորատորիան:

Ա.Ֆարամազյանը մեծ ավանդ ունի Հայաստանի տարածքի հանքային, հատկապես պղինձ-մոլիբդենային ֆորմացիաներում հազվագյուտ, ցրված և ազնիվ տարրերի (ռենիում, սելեն, թելուր, բիսմութ, գերմանիում, ռսկի, պլատին, պալադիում, ռոդիում, օսմիում և այլն) միներալոգիական և երկրաքիմիական ուսումնասիրությունների ասպարեզում: 1970թ. նա, Ս.Կալինինի և Ս.Տերեխովիչի հետ համատեղ,

բարձր ճշգրտության քիմիական-սպեկտրալ մեթոդների կիրառմամբ, Հայաստանի պղինձ-մոլիբդենային հանքավայրերի (Քաջարան, Ագարակ, Դաստակերտ) հանքանյութերում և խտանյութերում հայտնաբերեց պլատինի խմբի մետաղներ՝ պալադիում, պլատին, օսմիում և այլն, բացահայտեց նրանց տեղաբաշխման օրինաչափությունները:

Ա. Ֆարամազյանը ծանրակշիռ ավանդ ունի նաև Թեղուտի պղինձ-մոլիբդենային, Թուխմանուկի ոսկի-բազմամետաղային և Ախթալայի բազմամետաղային հանքավայրերի երկրաքիմիական և միներալոգիական ուսումնասիրությունների ասպարեզում: Նա, ԵԳԻ գիտաշխատող Զ.Չիբուխչյանի հետ համատեղ, Միրաքի ինտրուզիվի սահմաններում բացահայտել է ոսկի-սուլֆիդային հանքայնացման խմբի միներալների առկայությունը, ինչն իր հերթին մեծապես նպաստել է Թուխմանուկի հանքավայրի հայտնագործմանը և հետագա շահագործմանը:

Հայաստանի պղինձ-մոլիբդենային հանքավայրերի միներալոգիական կազմի բազմաբնույթ ուսումնասիրությունների արդյունքում Ա. Ֆարամազյանին հաջողվել է առանձնացնել հանքառաջացման տարբեր փուլեր և Հայաստանի տարածքի համար համապատասխան հանքանյութերում բացահայտել հազվագյուտ և ազնիվ տարրերին (թելուր, բիսմութ, ոսկի, արծաթ) բնորոշ մի շարք նոր միներալներ: Քաջարանի և Ագարակի հանքավայրերի մոլիբդենիտներում, ռադիոակտիվ օսմիումի ուսումնասիրության արդյունքում, նրան հաջողվել է ռենիում-օսմիում փոխհարաբերությունների մեթոդի կիրառմամբ ճշգրտել պղինձ-մոլիբդենային հանքայնացման բացարձակ հասակները:

1976թ. Ա.Ֆարամազյանը, Շ.Ամիրյանի, Ռ.Զարյանի և Գ.Փիջյանի հետ համահեղինակությամբ, «Հայաստանի հանքային ֆորմացիաների հազվագյուտ և ազնիվ տարրերը» մենագրության համար արժանացել է Հայկական ՍՍՀ Պետական մրցանակի: Նա հեղինակ և համահեղինակ է 5 մենագրությունների, 60-ից ավելի գիտական հոդվածների և 18 ձեռագիր աշխատությունների:

Ա.Ֆարամազյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Ջրբաշյանի հետ համատեղ, հեղինակ է նաև ՀՀ ԳԱԱ «Գիտություններ երկրի մասին տեղեկագիր» հանդեսում հրատարակված աշխատությունների «Մատենագրական ուղեցույցի» (2008թ): 1975թ-ից սկսած, տարիներ շարունակ, Ա.Ֆարամազյանն իր գիտական գործունեությունը հաջողությամբ համատեղում էր խմբագրական աշխատանքի հետ՝ որպես ՀՀ ԳԱԱ «ՀՀ ԳԱԱ Գիտություններ Երկրի մասին տեղեկագիր» գիտական հանդեսի պատասխանատու խմբագրի տեղակալ:

Անդրանիկ Ֆարամազյանի՝ գիտությանն անմնացորդ նվիրված, ազնիվ, համեստ, բարեկիրթ, ընտանիքի օրինակելի հոր և ամուսնու, գիտնականի և քաղաքացու հիշատակը միշտ վառ կմնա բոլոր նրան ճանաչողների և հատկապես «Գիտություններ երկրի մասին» տեղեկագրի բազմաթիվ ընթերցողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն
ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ